« 10 » հոկտեմբեր 2025թ. No 6224 - Ա

«ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2025 թվականից կրկնողաբար, ք. Երևան (ՀՀ ԱՆ ԱԱԻ) և/կամ առցանց («Զում» հարթակ)

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ

- Թիրախային լսարան՝ ավագ բուժաշխատողներ, հանրային առողջապահության մասնագետներ, բուժքույրեր (բակալավր), առողջապահության կառավարման / վարչարարության մասնագետներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-50 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 40 տեսական և 10 գործնական կրեդիտ. դասավանդող Կարինե Գաբրիելյանին՝ ՇՄԶ 40 տեսական և 10 գործնական կրեդիտ
- Կոնտակտ 011300088

Շաբաթ 1	
Օր 1	
5 ժամ	**Դասախոսություն** Բժշկական օգնության և սպասարկման որակի սահմանումը և մոդելները, որակի գնահատման միջազգային համակարգը, որակի ասպեկտները: Որակի ապահովման առանցքային կետեր, որակի բարելավման շրջափուլը: Որակի բարելավման մոդելները: Որակի գնահատման Ա. Տոնապետյանի եռաչափ մոդելը: Բուժօգնության որակի ապահովման բաղկացուցիչները՝ ներգործունակություն, արդյունավետություն, օրինականություն, ընդունելիություն, նպատակահարմարություն, օգտավետություն, անկողմնակալություն: Բուժօգնության որակի կառավարման հարակից հիմնական եզրույթներ, սահմանումներ. լիցենզավորում, հավատարմագրում, հավաստագրում, վկայագրում, սանդղագրում:
Օր 2	
5 ժամ	**Դասախոսություն** Առողջապահության համակարգի որակի բարելավման հայեցակարգ, ռազմավարություններ և դրանից բխող միջոցառումների ծրագրեր:

Օր 3	
5 ժամ	**Դասախոսություն** Բուժօգնության որակի գնահատման չափանիշներ և չափորոշիչներ: Չափանիշ-ստանդարտների տեսակները, հատկանիշները: Չափանիշ-ստանդարտի մշակման փորձագետների հանձնախմբի որոշում կայացնելու եղանակները: Կլինիկական չափորոշիչների տեսակները. ուղեցույց, գործելակարգ, ալգորիթմ, կլինիկական ուղի: ՀՀ ԱՆ-ի կողմից հաստատված կլինիկական չափորոշիչներ: ՀՀ-ում կլինիկական չափորոշիչների մշակման, ներդրման և վերահսկման կանոնակարգ:
Օր 4	
5 ժամ	**Դասախոսություն** Կլինիկական գործունեության հսկում/աուդիտ Որակի գնահատման համար անհրաժեշտ տեղեկությունների ձեռքբերման աղբյուրները և սկզբունքները: • Բժշկական գրառումների վերանայում: • Կառուցվածքի, ընթացքի, արդյունքի դիտարկում: • «Վիճակագրական զեկուցագրերի» միջոցով տեղեկությունների ստացման եղանակ: • «Քննական իրավիճակում” տեղեկությունների ստացման եղանակ: “Հարցման” ձևով տեղեկությունների ստացման եղանակ: • Ֆինանսական գրառումների միջոցով տեղեկությունների ստացման եղանակ: Բուժանձնակազմի աշխատանքի գնահատման մոտեցումները: Բուժաշխատողների գործելակերպի բարելավմանն ուղղված միջոցառումներ: Բուժանձնակազմի կողմից որակի ապահովման շահադրդման եղանակներ:
Օր 5	
5 ժամ	**Դասախոսություն** Բժշկական օգնության և սպասարկման անվտանգություն. պացիենտների անվտանգության միջազգային ուղեցույց/IPSG, անվտանգության ապահովման 6 հիմնական ուղղությունները. • Պացիենտների նույնականացում • Արդյունավետ հաղորդակցում • Դեղորայքային անվտանգություն • Անվտանգ վիրաբուժություն • Ներհիվանդանոցային վարակների/Բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների կանխարգելում: Հակամանրէային դեղերի կայունության դեմ պայքարի ռազմավարություն: Վայր ընկնելու կանխարգելում:

Շաբաթ 2	
Օր 1	
5 ժամ	**Դասախոսություն** «ՀՀ նորմատիվ ակտերով պարտադիր ներդրման համար սահմանված բուժօգնության որակի բարելավման գործիքներ», մեխանիզմներ, ներառյալ՝ • Որակի բարելավման խորհուրդներ • Որակի ապահովման պատասխանատուներ • Որակի ցուցանիշներ (ԱԱՊ և հիվանդանոցային օղակի). • Կազմակերպության ինքնագնահատում • Պացիենտների գոհունակության/փորձառության գնահատում • Դեղերի կողմնակի ազդեցության վերաբերյալ հաղորդում • Ձեռքերի հիգիենա • Անբարենպաստ պատահարների գրանցում և հաղորդում
Օր 2	
5 ժամ	**Դասախոսություն** ՀՀ-ում բժշկական օգնության որակի ապահովման/բարելավման վերաբերյալ իրավական հիմքեր: • Բժշկական կազմակերպությունների լիցենզավորման կարգում որակի պատասխանատուների առկայության պահանջ
Օր 3	
5 ժամ	**Դասախոսություն** • Որակի կառավարման համակարգի միջազգային չափորոշիչներ (ISO 9001-2015) • Բժշկական հաստատությունների հավատարմագրում (JCI, ISQua)» Բժշկական էթիկան և բարեվարքությունը բուժօգնության որակի համատեքստում: Բուժաշխատողների մասնագիտական էթիկայի վարքականոններ: Էթիկայի հանձնաժողովի ստեղծման, աշխատակարգի հաստատման մասին առողջապահության նախարարի հրաման:
Օր 4	

5 ժամ	**Գործնական աշխատանք** • Բուժհաստատության որակի շարունակական բարելավման ռազմավարական օրինակելի ծրագրի նախագծում: • Բուժհաստատության որակի ապահովման խորհրդի կողմից «Որակի բարելավման մշտադիտարկման և աջակցող վերահսկման օրինակելի պլան»-ի մշակում: Կլինիկական գործունեության հսկման գերակա ուղղություններով համապատասխան գործընթացների օրինակելի ցանկի և ձեռնակրկվող օրինակելի քայլերի/միջոցառումների մշակում:
Օր 5	
5 ժամ	**Գործնական աշխատանք** • Բուժհաստատության օրինակելի էթիկայի կանոնակարգի մշակում: • Բուժհաստատության գործունեության որակի ցուցանիշների ցանկի նախագծում: • Բուժսպասարկողների գործունեության կատարողականի գնահատման ցուցանիշների նախագծում: Բուժհաստատության գործունեության կառավարման վերաբերյալ ընթացակարգերի օրինակելի ցանկի նախագծում:

Դասավանդող՝ Կարինե Գաբրիելյան: